

1683ին, Յովհաննէս վարդապետ յիտալական լեզու թարգմաներ, ու հայերէն բնագրին հետ տպագրեր էր ի պրոմատան Միքայելի Բարսեղի իտալացւոյ, որոյ յիշատակարանին մէջ կը նշանակուին անուանք « Արձանացոցոյց գրոցս. և մանաւանդ Աղուէցի Նահապետին »

և Զուգայեցի Ղարաաշենց պարոն Անտոնին », որով կ'երեւնայ թէ այն թուականին իրեն յատուկ տպարանը չունէր Աղուէցին Նահապետ, որ և իր երկրաւոր կեանքը կ'ընթած է 1694 տարւոյն վերջին օրը :
Շարայաբեյի



ՅՈՐԴՈՐ ԱՏԵՆԱԿԱՆ ԱՌ ԱՌԱԿԱՆՈՆ

ԵՂԻՍԱՐԷԹ ՔԱՂԱՔԻ

ՎԱՍՆ ԿԱՆԳՆ ԵՂՈՑ ԶԴՊՐԱՏՈՒՆ Ի ՔԱՂԱՔԻ ԱՆԴ

(Շարունակութիւն, տես յէջ 153)



ՀԱՆԳԱՄԱՆՔ ԴՊՐԱՏԱՆ

Հանգամանօք զպրատան իմանամք նախ՝ զայն, զոր պարտի աւնել զպարտաւորն, կամ զայն՝ որ պարտի լինել 'ի զպրատանս. այսինքն են՝ բնակութիւն և բնակիչք, քահանայք և մանկունք և ծառայք, և հասք վասն նոցա : Երկրորդ իմանամք զայն, որ զործի 'ի զպրատան ըստ որոշեալ ժամու. այսինքն՝ թէ երբ յառնել, երբ ուտել, ևն. և թէ ըստ աւուր պատշաճի զինչ պարտ իցէ առնել : Երրորդ՝ իմանամք զայն, որով պահանքի 'ի կեանս. այսինքն է՝ ուտել և զգեւ, նուլ, և այլն : Զորրորդ՝ զայն, առ որ կարգի, այսինքն՝ թէ զինչ ուսուցանէ, օրպէս և օրպափ. զի այս է այն՝ առ որ կարգի, և այս է նորա նպատակ և վախճան :

ՀՍ ԱՌԱՋՆՈՑՆ

ա. ի զպրատան Եղիսաբէթ քաղաքի պարտի լինել բաւական տեղի անկողոր բնակութեան մանկանց և ուսուցչաց :

Բնակել և ննջել մանկանց՝ պարտի լինել չորս կամ հինգ 'ի միում սենեկի՝ աւելի կամ պակաս, իսկ ուսուցչաց՝ առանձին :

Ընդ մէջ մահճաց մանկանցն պարտի լինել խորոց տախտակամած, նոյնպէս և առ ոտամբ ըստ ձևոյ (սահմանելոյ) :

բ. ի զպրատան պարտի լինել տեղի խօսակցութեան հիւրոց, ուր և ծնօղք մանկանց կամ ազգականք և կամ բարեկամի նոցին անդ նստցին և անդ խօսակցին, և մի 'ի սեւեռեան նոցա :

գ. Այս խօսակցութիւն մանկանց ընդ արտաքինսն՝ երիցս և կամ առ առաւելն չօրիցս լիցի յամենան, և այն՝ յաւուրս հանգաբարութեան, որ է՝ հինգշաբաթի և կիսովէ :

դ. Պարտի լինել 'ի զպրատան և որոշեալ տեղի վասն հիւանդաց, զի 'ի տկարանալ ուրուք անդր փոխադրեսցի, և մի 'ի կառավարաց ունիցի զհոգ նորա. և երկու 'ի մանկանց կարասցեն խօսակցի լինել ընդ նմա հրամանաւ մեծաւորին : Իսկ 'ի ծանրանալ հիւանդութեանն եթէ կամք իցեն ծնօղաց, տարցին 'ի առնն իւրեանց :

ե. Պարտին լինել 'ի զպրատան երկու կամ երեք քահանայք հայք 'ի կարգէ սրբոյն Անտոնի աբբայի՝ որ 'ի վենետիկ. մին՝ իբր մեծաւոր, և այլքն՝ իբր կառավար և ուսուցիչ և հոգեւոր զատեալաբան՝

և այլ ևս երկու հայ քահանայք, դասատուք լատին լեզուի, վարձուք կալեալք, ընդ որս և չորս ծառայք, որոց երկուքն իցեն խոհակերք և երկուքն սպասաւորք :

զ. Հարկ է ունել զպրատան բաւական հասս 'ի կերակրել և 'ի զգեհուլ :

է. Հասք կամ տուրք վասն մանկանց պարտին լինել տմի ամի 150 ֆիորին. որ է՝ հարիւր յիսուն զլոթ, և զայս պարտ է վճարել 'ի սկզբան տարւոյն :

ը. Մանկունք՝ որք մտանն ի զպրատուն, յառաջագոյն պարտին ուսանել արտաբոյ զնախական և զլատինական գիրս, և զքրիստոնէական վարդապետութիւն :

թ. Հասակ մանկան պարտի լինել չորեք տասնամեայ, հնգետասնամեայ, և այլն. ոչ 'ի վայր քան զերկուտասն ամ, և ոչ 'ի վեր քան զութուտասն ամ, բայց եթէ կայցէ ընդունակութիւն :

ԼՍՏ ԵՐԿՐՈՐԻՒՆ

ա. Յամենայն իրս ժամ կարգեսցի և օր : Իսկ րաժանումն 24 ժամուց բովանդակ 'ի սոսին :

Եթմն ժամ՝ վասն զիշերային քնոյ :

Մի ժամ՝ վասն անկողին յարգարելոյ յառաւօտուն և յերեկոյին, յանկողին քնալոյ, և այլն :

Երեք ժամ՝ վասն հանգստեան. մի ժամ յետ ճաշուն (յամարտն աւելի). մի ժամ յետ ընթերաց, և մի ժամ ևս նախ քան զմանանել արևու :

Երկու ժամ՝ վասն սեղանոյ. երեք քաւորդ ճաշուն, երեք քաւորդ ընթերաց, և կէս ժամ՝ վասն նախաճաշի :

Եթմն ժամ և կէս վասն ուսման. այս ինքն է, մի ժամ և կէս վասն դասաւորութեան, երկուս ժողովելով 'ի զաստատուն, կէս կէս ժամու վասն իւրաքանչիւր զատու : Երեք ժամ (կամ երկու և կէս) վասն ուսանելոյ և 'ի միտ առնելոյ զգասն, ծախելով զմի մի ժամ վասն դատուն առելոյ. մի ժամ՝ վասն համար տալոյ ուսուցչին, ևս և հարցանելոյ զտարակոյս հանդիպեալս 'ի վերայ առելոյ դատուն, կէս ժամ՝ վասն քաղուածի նախըն-

թաց դատուն. մի ժամ և կէս (կամ երկու ժամ) շարապրութիւն, այսինքն՝ եթէ յաւելցի կէս ժամ յընթերցմանէ դատուն :

Մի ժամ՝ վասն գրաւարժութեան. կէս ժամ յառաւօտու հայերէն, և կէս ժամ յերեկոյի լատիներէն :

Մի ժամ և կէս վասն աղօթից. կէս ժամ առաւօտեան և երեկոյեան աղօթից, կէս ժամ՝ պատարագի, և կէս՝ ժամերգութեան ընդ երեկս :

Մի ժամ՝ վասն այլևայլ անորոշ գործողութեանց, կամ իրաց սահմանելոց 'ի մեծաւորէն, և կամ վասն ժամանակին որ յայլ ինչ իրս ծախի :

բ. Իսկ գործածութիւն վերոյգրելոց կարգի այսպէս .

Յառաւօտու 'ի հարկանել զանգակի՝ յարիցեն ամենեքեան անդանդաղ, խաչակրնքեալ զերեսս փառս տացեն՝ Հաստչին, և յանձնեսցեն 'ի նա զինքեանն և զարարս իւրեանց. յարգարեսցեն զանկողինս. լուսացեն զերեսս 'ի սահմանեալ տեղւոյ. և ապա ծուր եղեալ յաղօթարանի՝ կատարեսցեն զաղօթս իւրեանց քաւորդ մի ժամու : Եթէ ոք աւելի ժամանակ գտցէ, կարէ ընթեռնուլ անձայն :

Յանցանել երկց քաւորդաց յառաջնոյ զանգակի՝ հարկանի զանգակ հոգեւոր ընթերցման կիսոյ ժամու հայերէն իբր գրաւարժութիւն :

Յանցանել կէս ժամու, հարկանի զանգակ, և ժողովին 'ի դասատուն, և առեալ զգասն՝ գնան յիւրեանց տեղի : Դարձեալ զանգակ, և այլն, մինչև կատարին 24 ժամք :

գ. Յաւուրս հանդարտութեան՝ յառաւօտու քաղուած ժամն 2 : Հանգիստ՝ ժամ 1 : Վիճարանութիւն, ժամ 1 : Երեկոյն երամբշտութիւն կամ նկարչութիւն՝ ժամ 1 : Այլ ինչ գործ զուարճալի ժամ 1 : Առանձնական գործք և խաղք ըստ որոշեալ ժամու :

դ. Յաւուրս կիրակեօց, յառաւօտու՝ եթէ կայցէ խոստովանութիւն, երկու պատարագ. եթէ ոչ՝ մի պատարագ, և ապա ևս զինի ձայնաւոր կամ թիւ :

Յառաւօտու՝ հոգեւոր ընթերցումն ժամն 2. մի ժամ՝ հայերէն և մի ժամ՝ լատիներէն : Քաղաքաւարութիւն և կամ խրատ՝ ժամ 1. հանգիստ՝ ժամ 1 :

Յերեկոյին՝ հոգեւոր ընթերցումն ժամ 1. քրիստոնէական կամ իւրատ՝ ժամ 1. և հանդիստ ըստ շափու :

ե. Յուլի աւուրս միանգամ, կամ գոնէ 'ի հնգետասան աւուրս միանգամ՝ խոստովանեցին մանկունք :

զ. Ի ժամանակ բարեկենդանի՝ պարտաւեցին մանկունք թատերգութեանց, զաւուրս 15 և. Յամին երկիցս տացի մանկանց պարապ գիւղագիտութեան, 'ի զարնան՝ 15 օր, և յաշնան՝ 15 օր. և անդ աղատ լինին յուսմանէ :

ԸՍՏ ԵՐՐՈՐԴԻՆ

ա. Կերակուր զպրատան պարտի լինել վայելուչ և բաւական. Ի ճաշուն չորս տեւակ, և յերեկոյն երեք. և յաւուրս տօնից աւելի. և մի օր իշխեսցէ 'ի սեղանատան սարքեր ինչ ուտել որպէս և իցէ, 'ի բաց առեալ գհարկ տկարութեան :

Գինի՝ որչափ պիտոյ իցէ, բայց ըստ կարի աակա :

Ի նախաճաշի հաց՝ հանդերձ սակաւ խառնիս :

Մօտ ընդ երեկս պատու, կամ պտղանման ինչ :

բ. Ի սեղանատան ընթերցեալ լինի զիրջ հայերէն, մի գլուխ աստուածաշունչ և յետոյ այլ զիրջ. և զկնի ընթերցման հրաման լիցի խօսել անդ զասընկեր ընդ զասընկերի :

գ. Չգետաք մանկանց պարտին լինել միակերպ. երկու կապայ երկայն մինչ 'ի պըճղունս, նոյնպէս և երկու վերարկու : Չորս լորապ մեծ, և վեց փոքր : Երկու հողաթափ, երկու զօսի շալէ՝ նոր և հին՝ իսկ զոյն սոցա ըստ պատշաճի որոշեսցի :

Առ անկողնոյ սեղան մի և աղօթարան մի, տօշապ մի և աթոռ մի :

Մի խաշելութիւն, մի Աստուածածնայ պատկեր, և երկու ևս այլ :

Մի կաղամար զրի, երեք զրիչ, մի չախա, երկու մկրաս՝ մեծ և փոքր. երկու օձելի, մի մաղխիլ, մի հայելի : Չորս քթի թաշկինակ, երկու քրոնքի թաշկինակ, երկու սափրելու թաշկինակ, ասեղ, դերձան,

տպրում, մոմաւոտ, աւել, և այլն : Եւ և տուփ մի վասն իրաց նկարչութեան : Իսկ զիրջ և թուղթ՝ ըստ իւրեանց չափու՝ խորհրդով կառավարաց :

դ. Իւրաքանչիւր օր յամենայն շաբաթի մաքրեսցէ զսենեակ իւր, և զկանոնորին : Իւրաքանչիւր օր յաւուր շաբաթու՝ կամ յաւուրն պատշաճի՝ սափրեսցի, և այս ընկեր ընդ ընկերի :

Իւրաքանչիւր օր յամենայն կիւրակէի կամ 'ի հնգետասան աւուրս միանգամ փոխեցէ զշապիկ իւր և զշապիկներն, և այլն :

Յամենայն եօթնեկի կամ գոնէ 'ի հընգետասան աւուրս՝ տացին լուացք :

Եւ իւրաքանչիւր ունիցի յատուկ տեղի աղտեղեալ զգեստուց արտաքոյ սենեկի :

ԸՍՏ ՁՈՐՐՈՐԴԻՆ

ա. Դպրատուն Եղիաթէթ քաղաքի կարգի ուսուցանել հարկաւոր գիտելիս. սկզբնաբար լատիներէն, և երկրորդաբար հայերէն. այնպէս զի իւրաքանչիւր ուսանող կարողցէ քաջ խօսել և քաջ շարադրել լատիներէն, և երկրորդաբար հայերէն : Մաճառներէն ևս կարեն ուսանիլ, բայց իբր արտաքոյ կարգի : Եւ այս վասն արեւմտեան մանկանց. իսկ վասն արեւելեայց՝ սկզբնաբար հայերէն, և երկրորդաբար լատիներէն :

բ. Ուսանելիք 'ի պարտաւոր են սօքին. նախ, լեզուն ամենայն հանգամանօք, այսինքն քերականութեամբ, ճարտասանութեամբ, ևն : Երկրորդ, քաղաքավարութիւն, մարդավարութիւն, և այլն :

Երրորդ, փիլիսոփայութիւն ամենայն մասամբ, այսինքն և մաթեմատիկայն, չօձիս գայն, ֆիզիկայն, և մեքաֆիզիկայն :

Չորրորդ, իրաւագիտութիւն ամենայն մասամբ, այսինքն քաղաքական իրաւունք՝ թէ՛ ընդհանրական և թէ՛ մասնաւոր, զոյղն ինչ ևս եկեղեցական իրաւունք :

Հինգերորդ՝ տեղեկութիւնք արտաքին իրաց. այսինքն պատմաբանութիւն, ժամանակագրութիւն, և աշխարհագրութիւն :

Վեցերորդ, համառօտ տեղեկութիւն բաւ

նից աստուածայնի և աստուածաբանական
գիտութեան :

Թայտոսի յաւելեալ լինի և փոքր ինչ
վարժութիւն երաժշտութեան և նկարչութեան :
Այլ եթէ որ կամիցի զայտոսի երկուս կա-
տարելապէս ուսանիլ, յատուկ ծախք են պի-
տոյ :

գ. Այս ուսմունք մանկանց պարտի սե-
ւել 'ի զպարտան ընդ ամենայն՝ զամս վեց :
Եւ մանկունք՝ որք ուսանին, անդ պարտին
մնալ, անդ ուտել, և անդ ննջել, մինչև
ցկատարել զուսումն :

դ. Թաւարտել իւրաքանչիւր ուսման՝ ամի
ամի հանդիսաւոր վիճաբանութիւն լիցի 'ի
զպարտան առաջի ամենեցուն՝ որք միանգամ
կամիցին գալ և անսանել զայն :

ԿԱՐԳ ՈՒՄԱՐԱՆ ՊԵՍՊԵՍ ԿԱՐԷ ՏՐԱՄԱՐԱՆՈՒՄ
ՅԻՒՐԱՔԱՆՁԻՒՐ ԱՄՍ
ԶՈՐՈՅ ԶՈՐԻՆԱԿ ՄԻ ԴԻՅՈՒՔ ԱՍՏ ԱՌԱՋԻ

Թառաջին ամի՝ զառաջին մասն քերական-
նութեան, և զառաջին մասն մարտնչաբի-
զայի, որ է թուաբանութիւն. ևս և զպատ-
մաբանութիւն, արեւելեան աշխարհական և
եկեղեցական :

Յերկրորդ ամի՝ զերկրորդ և զերրորդ մասն
քերականութեան, և զարեւմտեան պատմու-
թիւն աշխարհական և եկեղեցական :

Յերրորդ ամի՝ զճարտասանութիւն և զաշ-
խարհագրութիւն, և զերկրորդ մասն մարե-
մարիգայի՝ որ է երկրաչափութիւն :

Ի չորրորդ ամի՝ զլուսնիգայն, զբարոյական
և զմարեմարիգայն. և զերրորդ և զչորրորդ
մասն մարեմարիգայի, որ է՝ աստղաբաշ-
խութիւն և մեքենականութիւն :

Ի հինգերորդ ամի՝ զֆիզիգայն հանգերձ
բնագննութեամբ :

Ի վեցերորդ ամի՝ զհամառօտ աստուա-
ծաբանութիւն, զիրաւագիտութիւն, և զտե-
ղեկութիւն աստուածայնի :

(Եւ ապա այլ ևս տմիսք երեք՝ անցնոց քա-
ղուածք և վիճաբանութիւն ընդհանուր) :

ԿԱՆՈՆՔ ՄԱՆԿԱՆՑ ԴՊՐԱՏԱՆ

ա. Մի՛ որ 'ի զպարտան յընդունայն և
'ի զատարկ իրո ծախեսցէ զժամանակ իւր,
և ո՛չ զժամ հանգստեան :

բ. Առանց հրամանի մի՛ որ 'ի մանկանց
կարացցէ ելանա արտաքս 'ի զպարտանէ, եթէ
հրաման լիցի վասն հարկի՝ առանց քահանայի
մի՛ որ ելցէ :

գ. Առանց հրամանի մի՛ որ 'ի մանկանց
խօսեսցի ընդ արտաքինան, թէ և ծնողք իւր
իցեն :

դ. Դաս ընդ դասի մի՛ կարացցէ խառնիլ
կամ խօսիլ, առանց յայտնի հրամանի :

ե. Մի՛ որ յանկողնոյ յանկողին խօսեսցի
ընդ ընկերի, և ոչ սենեակի սենեակէ և ո՛չ
'ի պատուհանէ :

զ. Մի՛ որ 'ի դասառութեան և 'ի ժա-
մանակի ուսման իշխեսցէ խօսիլ :

է. Ի դասատան իւրաքանչիւր որ խօսեսցի
լատիներէն, չայց եթէ նիւթն իցէ հայերէն.
Իսկ 'ի ժամանակի հանգստեան՝ լատիներէն
և հայերէն :

ը. Մի՛ որ իշխեսցէ յիշոցատու լինել,
կամ զաղտեղիս խօսիլ, և կամ զանպար-
կեշտս պատմել :

բ. Մի՛ որ կատակեսցէ զընկեր իւր, և
կամ յանդիմանեսցէ զնա, և կամ բամբա-
սեսցէ, և կամ քսութիւն արասցէ զումեքէ
առ այլ. այլ եթէ ունիցի ինչ, կառավարին
յայտնեսցէ :

ժ. Մի՛ որ պարծեսցի ազնուութեամբ ազգի
իւրոյ կամ տան :

ժա. Մի՛ որ ունիցի յասուկ սէր և կամ
յատուկ առանձնութիւն ընդ այլում, որպէս
թէ կապեալ իցէ ընդ նմա՝ իբր ընդ իւրում
յատուկ սիրելոյ :

ժբ. Ի զնայն յաղօթատեղի կամ 'ի սե-
ղան, ըստ իւրաքանչիւր դասու զոյգ զոյգ եր-
թիցեն լուծեամբ և պարկեշտութեամբ. և
իւրաքանչիւր որ զիւր տեղի ունիցի ըստ ե-
րիցութեան, և մի՛ որ կարացցէ խօսիլ յա-
ղօթարանի և ո՛չ իսկ ի սեղանատան, չայց
եթէ յետ զազարկոյ ընթերցմանն :

ժգ. Մի՛ որ այլազգ զգենուցու առ ար-
տաքս, կամ այլազգ ունիցի արտաքուստ զձև

կամ զգոյն, կամ զնիւթ զգետառու կամ մահճի, և այլն. իսկ ի ներքուստ որպէս և ունիցի' չէ ինչ :

ժգ. Մի՛ ոք ունիցի աւելի ինչ երեւելի 'ի վերայ իւր, որպէս ժամացոյց, արծաթեայ տուփ : ժե. Մի՛ ոք առանց հրամանի կարողացէ գրել կամ առնուլ թուղթ. կամ շինել ինչ կերտուած՝ թէ՛ փոքր իցէ և թէ՛ մեծ, և կամ պարապել այնպիսի գործոյ՝ որ ոչ է կարգեալ 'ի դպրատան :

ժգ. Ի հարկանել զանգակի՝ վասն ո՛ր և իցէ իրաց՝ մի՛ ոք յամենցէ :

ժե. Մի՛ ոք իշխեսցէ տրանջել զկառաւարչաց և զուսուցչաց, ո՛չ առաջի բնկերաց, և ո՛չ առաջի արտաքնոց. այլ եթէ՛ ունիցի ինչ, մեծաւորին յայտնեսցէ 'ի ծածուկ :

ժբ. Մի՛ ոք իշխեսցէ երթալ ի խճակերանոցն, և զննել՝ թէ՛ զինչ կերակուրք պատրաստին, և ո՛չ իսկ արտնջել զկերակուրց. այլ եթէ՛ չհաւանի կերակուրց իմիք, մեծաւորին յայտնեսցէ 'ի ծածուկ :

ժբ. Ամենայն ոք պարտական լիցի յայտնել կառավարչին 'ի ծածուկ՝ զայն ամենայն, զոր տեսցէ յայլս ընկզէ՛մ այսոցիկ կանոնաց. և եթէ՛ յանցաւորն իմանայցէ զյայտնողն՝ մի՛ իշխեսցէ նշան ինչ առեւութեան կամ ռիսակալութեան ցուցանել առ նա. ապա թէ՛ ոչ՝ կրեսցէ զպատիժ : Իսկ եթէ՛ ամբաստանողն յատեւութենէ ամբաստանեալ իցէ, ցուցցէ զայդ կառավարչին :

Ժ. Ամենեքին սիրով կացցեն ընդ միմեանս իբրեւ եղբարք, և ամենայն քաղաքավարութեամբ՝ 'ի պատիւ զմիմեամբք եղանիցեն բանիւ և գործով. այսինքն այնպէս խօսեսցին ընդ միմեանս և այնպէս վարեսցին դործով, զի ցուցցեն թէ՛ պատուեն զմիմեանս, որպէս արժան է մանկանց ազնուականաց և իմաստնոց :

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԳԹՈՒՍԱՆ Ի ՍԵՆԱԹԷ

Դպրատուն Եղիսաբէթ քաղաքի որովհետեւ կարգի յօգուտ հասարակութեան, հասարակապետութիւնն ևս պարտի խնամ ունիլ յայն 'ի ձեռն սենթիին 'ի հինգ իրս, զորս է տեսանել 'ի յետագայս :

ա. Որ միանգամ կամիցի մտանել 'ի զլպրատուն, պարտի ունիլ հրամանագիր 'ի սենթիին :

բ. Եթէ՛ ոք չկամիցի տալ զմանուկ իւր 'ի դպրատուն Եղիսաբէթ քաղաքի, այլ յայլ սենթիին մի՛ թոյլ տացէ այսմ, և ինքն կայցէ վրէժխնդիր : Եթէ՛ կայցէ ծանր և անհաճանելի պատճառ, սենթիին որոշեսցէ, ազդ առնելով միանգամայն և մեծաւորի դպրատանն : Իսկ եթէ՛ չկայցէ ծանր պատճառ, և տէր մանկանն տացէ զնա յայլ դպրատուն, սենթիին պարտաւորեսցէ զտըւողն՝ զի տացէ ամի ամի 50 զլրութի՛ դպրատունն ցաւարտումն ուսման : Իսկ որ ոչ ուտաւ 'ի դպրատան քաղաքին յետ կանգնելոյ այնր՝ մի՛ իւր Ժառանգեսցէ զանուն ազնուականին :

գ. Եթէ՛ ծնողքն կամիցին յառաջ քան զժամանակն հանել զորդիս իւրեանց 'ի զլպրատանէ, քննեսցեն զպատճառն չորս հոգաբարձու աղայայք ընդ կառավարչացն : Եթէ՛ չկայցէ ծանր և մեծ պատճառ, սենթիին պարտաւոր լիցի արգելուլ. և եթէ՛ չիցէ հնար, պարտաւորեսցէ զծնողսն առժեւ զուսուրն, այսինքն զհաստ երկից ամաց, եթէ՛ պարտ էր նոցա սակաւին կալ յուսման զերիս կամ զաւելի ևս ամս. ապա թէ՛ ոչ՝ որչափ ամբ մնացեալ իցեն, զնոցին հաստ վճարեսցեն :


դ. Սենթիին կարգեսցէ զմի յաղայայից 'ի վերայ հասից դպրատան, զի նա ունիցի զհոգ զրամացն. որպէս զի ստուղքն անխափան վճարեսցեն զայն մեծաւորին ամի ամի, 'ի սկզբան տարւոյն : Եթէ՛ ոչ կամիցին վրէժարել և կամ եթէ՛ յամեցուցեն, աղայայն ստիպեսցէ. և եթէ՛ չկարողացէ՝ ծանուցէ սենթիին, և սենթիին հոգ տարցի և պարտաւորեսցէ վճարել. ապա թէ՛ ոչ՝ ինքն վրէժարեսցէ :

ե. Սենթիին կարգեսցէ և զերիս աղայայն 'ի պաշտպանութիւն դպրատան, որք և ունիցին հոգ 'ի հինգ իրս : Մի՛, 'ի վերայ ուսուցչաց, արդեօք որպէս արժանն է՝ ուսուցանեն թէ՛ ոչ : Երկրորդ, ի վերայ մանկանց, արդեօք ըստ արժանոյն յառաջանան թէ՛ ոչ : Երրորդ, 'ի վերայ ծնողաց, թէ՛ որպէս վարին ընդ մանկուսն : Չորրորդ, 'ի վեր

րայ իրաց և կարգի դարատան, թէ որպէս պահին : Հինգերորդ, 'ի վերայ հոգաբարձու աղայային թէ զիսորդ վարի :

Այլ եթէ աղայայք արասցեն ինչ այնպիսի, որ իցէ ընդդէմ, կարասցէ զպատուուն բողոքել զսոցանէ առ սենաթն, և սենաթն

պարտաւորեացի պաշտպան լինել և վրէժիւնդիր : Այս թէ անփոյթ գտցի սենաթն յայս և կամ յայլ պարտաւորութիւնս իւր, լիցի բողոքումն առ լինքում փարսէս, և նոքա կացցեն ջատագով, և սենաթն մի կարասցէ անարգել զջատագովութիւն նոցա :



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼԱ

(Տես յ'էջ 168)

ԽԱ

Կէօք—չայի բարձրասանկակաց վրայ. — Դադար՝ Թագա—քէնտ գիշդին մէջ. — Բանակետդ Ռատքի Քրդեռուն.

21 յուլիս. — Կէօքուան դէմ, երկինքը փոքր ինչ պարզելով, կարաւանը ճամբայ կ'ելնէ՝ Կէօք—չայը չըջապատող բարձրաւանդակներուն ուղղութեամբ : Երազարար կ'արշաւենք դէպ ի բարձունքը, բայց օդը հետզհետէ աւելի կ'աւրուի : Չեան և կարկտի տարափի մը ներքեւ, և սառնաշունչ հովով կարկամած, կը հասնինք Քրդաց առաջին բանակետը, որ ճիշդ Գեղարդի վրայ կը գտնուէր : Հոն, խմբովին կը դիմենք վրաններէ միոյն մէջ, ուր պառաւ կին մը, որ նախ զմեզ մաքսաւորներ կարծեց, մեծ հիւրընկալութեամբ կը պատուէ զիս, մինչդեռ կատաղի շներն կը սպառնան զմեզ պատառել :

Օրաշափը 2300 մետր բարձրութիւն կը ցուցնէ, իսկ ջերմաչափը՝ 11 ստորեան : Այս սարաւանդը Քէնտպուլաք կը կոչուի, և հոն գտնուող հովիւներն, որ քիչ յառաջ հասեր էին այնտեղ, կարծես շատ կը նեղուէին օդին խառնակութիւններէն :

Քէնտպուլաքէ երեք քիլոմետր հեռու, գիշերը անցընելու համար կանգ կ'առնունք Թագա—քէնտ կամ Ապտուլլահ—սար գիւղին մէջ : Գեղապետը՝ որ Գեղարդէն եկած էր կարաւանին հետ, մեզ առաջնորդութիւն պիտի ընէր Կէօք—չայի չըջակայ լեռանց մէջէն մինչև ի Նոր—Պայազիտ : Յառաջուց երկու

չափար դրկեր էր, որպէս զի գիշերը անցընելու համար մեզ իջեման մը պարտաւորեն : Այս իջեմանը կը նմանէր փոքրիկ սալաւան մը, որուն միայն երկու կողմերն որմերով պատապարուած էին, իսկ միւս երկու կողմերը գորգերով ծածկուած : Ահա այս էր մեր բնակարանը նոյն գիշերուան համար, որ սակայն՝ իւր օդը հոսանքովն հանդերձ՝ նախադասելի էր մեր հիմակուան ամէն բանէ գուրկ վրանէն :

Այս գիւղը 2200 մետր բարձրութեան վրայ շինուած է, ուր հազիւ տասուերկու ընտանիք և մի քանի վրանարնակ քրդեր կը գտնուին : Այս բարձրութեան վրայ արմառել լաւ կը բռննին :

Բարձրաւանդակին հարաւային ծայրէն կը տեսնուի հեռուն յաղթահասակ Մասիս լեռը և Երասխայ հովիտը, իսկ անմիջապէս վարը տարածուած է Գեղարդայ խորածորը և վանքը, որ կառուցուած է աւելի քան 300 մետր բարձրութեամբ սեղացեալ ժայռի մը ստորոտը : Թէ և տասն վայրկենի մէջ կարելի է իջնել հոն, բայց մենք ձիով երեք ժամուան մէջ հասանք, լեռան չըջանք կատարելով : Զուր տող կը ջանանք բնակարանէն քանի մի քայլ հեռանալ, ակնակի մը տալու ընդհաւնուր տեսարանին, որ սարահարթի բարձունք